

Հարց

Եթե էլեկտրամատակարարման ընդհատումը տեղի է ունեցել առևտրային հաշվիչից անմիջապես հետո տեղադրված ավտոմատի անջատման արդյունքում, ապա մատակարարը ի՞նչ ժամկետում է սպառողի էլեկտրամատակարարումը պարտավոր վերականգնել:

Պատասխան

Եթե էլեկտրամատակարարման ընդհատումը տեղի է ունեցել առևտրային հաշվիչից անմիջապես հետո տեղադրված ավտոմատի անջատման արդյունքում, ապա մատակարարը սպառողի էլեկտրամատակարարումը պարտավոր է վերականգնել վերջինիս կողմից տեղեկացվելուց հետո ոչ ուշ, քան՝

1. 2 ժամում՝ Լեռնային Ղարաբաղի Յանրապետության քաղաքային համայնքներում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրվա ընթացքում.

2. 4 ժամում՝ Լեռնային Ղարաբաղի Յանրապետության գյուղական համայնքներում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրվա ընթացքում.

3. 16 ժամում՝ Լեռնային Ղարաբաղի Յանրապետության ողջ տարածքում, եթե անջատումը տեղի է ունեցել սպասարկման օրերից դուրս:

Մատակարարը սպառողի էլեկտրամատակարարումը վերականգնելուց հետո պարտավոր է նրա հետ կազմել ակտ՝ էլեկտրամատակարարման ընդհատման և վերականգնելու ամսաթվի ու ժամի վերաբերյալ: Ակտը կազմվում է 2 օրինակից, որոնցից մեկը տրվում է սպառողին, իսկ մյուսը պահպում է մատակարարի մոտ: Մատակարարը պարտավոր է վարել այդ ակտերի հաշվառման առանձին գրանցամատյան, որում առնվազն պետք է նշվեն՝

1. Յոսանքագրկված սպառողի բնակության վայրը, հասցեն և հեռախոսահամարը,

2. Ընդհատման մասին տեղեկանալու ամսաթիվը և ժամը,

3. Էլեկտրամատակարարման վերականգնման ամսաթիվը և ժամը,

4. Կազմված ակտի հերթական համարը, կազմնան ամսաթիվը և ժամը:

Մատակարարը պարտավոր է գործադրել բոլոր հնարավոր միջոցները սույն գլխում նկարագրված դեպքերում սպառողի էլեկտրամատակարարումը հնարավորինս կարծ ժամկետում վերականգնելու համար: